Հավելված N 2
2025 թվականի փետրվարի 4-ին կնքված
N «1101-11009/2025» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Անօթևան անձանց կացարանով ապահովում» |
| Դրամաշնորհի N | **«1101-11009/2025»** |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամ |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025թ.-31.12.2025թ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2025թ.-31.03.2025թ. |
| Ներկայացման օր | 10.04.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Տնօրեն՝ Շավարշ Խաչատրյան |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

| |
|---|
| 1) կացարանով ապահովման և սոցիալական այլ ծառայություններ հայցող շահառուի անհատական կարիքների գնահատում և գնահատված կարիքներին համարժեք ծառայությունների մատուցման պայմանագրի կնքում.<br>2) անհատական սոցիալական ծրագրի կազմում, վերասոցիալականացման պայմանագրի կնքում.<br>3) կացարանով ապահովման և սոցիալական այլ ծառայությունների տրամադրում շահառուի հետ կնքված պայմանագրին, ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան, մասնավորապես՝<br>• բնաիրային օգնություն՝ սննդի, հիգիենայի միջոցների, հագուստի, կոշիկի ձևով.<br>• բժշկական օգնություն և սպասարկում.<br>• սոցիալ-հոգեբանական օգնություն.<br>• խորհրդատվական օգնություն.<br>• այլ համարժեք սոցիալական ծառայություններ՝ ըստ անհրաժեշտության |

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից

իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

| |
|---|
| Անօթևան անձանց հետ կնքված վերասոցիալականացման համաձայնագրերի ժամկետների երկարացում կամ նորերի կնքում, անհատական սոցիալական ծրագրի կազմում, վերասոցիալականացման պայմանագրի կնքում.<br><br>Բժշկական օգնություն և սպասարկում<br><br>բժշկասոցիալական փորձաքննության կամ անձի ֆունկցիոնալության գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեռք բերում և ներկայացում, հաշմանդամության հետ կապված այլ խնդիրների լուծում, ինչպես նաև անհրաժեշտ աջակցող միջոցներով ապահովում, ստացիոնար բժշկական կազմակերպություն տեղափոխում<br><br>Սոցիալ-հոգեբանական աջակցություն<br><br>Իրավաբանական ծառայությունների տրամադրում<br><br>շահառուի իրավունքների ու շահերի պաշտպանություն և դրանց վերաբերյալ տեղեկատվության տրամադրում<br><br>բնաիրային օգնության տրամադրում՝ շահառուների սննդի տրամադրման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների իրականացում՝ օրական ճաշացանկի կազմում, անհրաժեշտ մթերքի ստացում, դրանց պատրաստում, շահառուներին, այդ թվում՝ անկողնային հիվանդներին, անհրաժեշտ քանակի և որակի երկանգամյա սննդի տրամադրում |

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

| |
|---|
| |

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

| |
|---|
| Կարևորելով հանրային առողջության դերը անօթևանների շրջանում, որը ՀՀ Կառավարության 2022թ. նոյեմբերի 3-ի 1699-Ն որոշման 30-րդ կետի համաձայն, որպես պարտականություն ՝ դրա իրագործումը դրված է ՀՀ Առողջապահության նախարարության և իր ենթակայությամբ գործող առողջապահական հաստատությունների վրա, ուստի հարկ եմ համարում տեղեկացնել Ձեզ հետևյալը.<br>Վերջին շրջանում շատացել են դեպքերը, երբ «Անօթևանների ժամանակավոր կացարան»-ում բնակվող շահառուներին, անհետաձգելի բուժօգնության տրամադրման համար, կանչ է տրվում «1-03 Շտապօգնության» ծառայություն՝ մասնագիտացված բժշկական հաստատություն տեղափոխելու համար,սակայն «Շտապօգնության» |

բժիշկները հայտնում են, որ «Իրենք տանում են հիվանդանոց, հիվանդանոցը չի ընդունում, պատճառաբանելով ազատ տեղ չունենալը» և նույն վիճակով հիվանդին հետ են ուղարկում կացարան:

Նշեմ նաև որ հիվանդանոցները այնքան են առաջնորդվել իրենց կողմից որդեգրած ռազմավարությամբ, որ շատ դեպքերում «Շտապօգնության» ծառայության բժիշկները անգամ կացարանից չեն ցանկանում տեղափոխել՝ ենթադրելով, որ հիվանդանոցը չի ընդունի և հիվանդը կմնա ողջ օրը իրենց մեքենայի մեջ:
Կրկին անգամ կարևորելով մեր կողմից ծառայություններ ստացող շահառուների առողջության պահպանումը, խնդրում ենք Ձեզ Ձեր ուշադրության կենտրոնում պահել նշված երևույթը և լուծում տալ տվյալ լրջագույն խնդրին:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Ծրագրի լավարկմանն ուղղված միջոցառումները կրում են և կրելու են շարունակական բնույթ, ծրագրի իրականացման ողջ ընթացքում, ինչը ենթադրում է փուլային գործողությունների շղթա՝ ամսական պարբերականությամբ:

Նախատեսվում է տվյալ ամսում շարունակել հիվանդությունների կանխարգելմանն ուղված միջոցառումները՝ հիվանդությունների բացահայտմանն ուղղված թեստավորման փուլում հիվանդության դրական արդյունքներ ունեցող շահառուներին ուղորդելով բուժհաստատություն՝ ամբուլատոր պայմաններում բուժման նպատակով:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

Կացարանում բնակվող շահառուների ժամանցը ապահովելու և ճիշտ կազմակերպելու նպատակով հիմնադրամը պատրաստել և կահավորել է առանձնացված սենյակ, որտեղ կան սեղանի խաղեր՝ (օրինակ շախմատ, նարդի, շաշկի, լոտո) ուր շահառուները կկարողանան առավոտյան նախաճաշից հետո այցելել և լիցքաթափվել՝ կտրվելով առօրյա կենցաղային հոգսերից:
Ինչպես նաև փորձնական նպատակով տեղադրվել են որոշակի քանակությամբ մարզասարքեր՝ կայուն ֆիզիկական առողջության պահպանման համար:
Համագործակցելով «Բժիշկներ առանց սահմանների»–ի միջազգային ծրագիր իրականացնող հայաստանյան գրասենյակի հետ «Անօթևանների ժամանակավոր կացարան»-ում իրականացվել է հեպատիտ C, հեպատիտ B և ՄԻԱՎ/ՁԻԱՀ հիվանդությունների բացահայտմանն, կանխարգելմանն և դրանց բուժմանն ուղղված հետազոտություններ:
Պայմանավորված անօթևան անձանց ավելի բարձր թվով քան նախատեսված է պայմանագրով՝ 100 շահառու յուրաքանչյուր ամիս, անօթևան անձանց ընդունելությունը, կատարվել է հերթագրումով: Հերթագրված անօթևանների ցուցակում նշելով անձանց անուն, ազգանունները ինչպես նաև կոնտակտային հեռախոսահամարը: Եղել են շահառուներ, ովքեր ընդհանուր տիպի կացարանի շահառուներ չեն հանդիսացել և կարիք են ունեցել հատուկ տիպի ժամանակավոր կացարանի, սակայն Հայաստանի Հանրապետությունում հատուկ տիպի ժամանակավոր կացարան դեռ չլինելու

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| ---------------------------------- | ---------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |